

## Հաշվետվություն

ՀՀ Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ուսումնասիրությունների վերաբերյալ

Տնօրեն	Կ. Անդրեսյան
Հաշվապահ	Ա. Բաղդասարյան
Հասցեն	Կապան, գ. Արծվանիկ
Հեռախոս	6-03-04

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի 2014թ. «Ներքին աուդիտի բաժնի» տարեկան ծրագրի, մեր կողմից իրականացվեց Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

Մենք աուդիտի ենք ենթարկել կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը 01.01.2011թ. առ 01.01.2014թ. ժամանակաշրջանը, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Աուդիտն ընդգրկում է նաև ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգումը, գնման գործընթացի իրականացումը, կիրառվող հաշվապահական հաշվառման սկզբունքները, ֆինանսական փաստաթղթերի կազմման գնահատումը, ղեկավարության կողմից իրականացվող կառավարումը, խիստ հաշվառման փաստաթղթերի հաշվառման և պահպանման ընթացքը, դասագրքերի վարձակալությունը:

Աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Մեր պարտականությունն է իրականացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:

Կազմակերպությունը ունի կանոնադրություն, որը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում՝ առակ է վկայականը:

Կազմակերպությունում գործում է վարձու աշխատողների աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման վերաբերյալ հրամանագիրք, դրանք սահմանված կարգով համարակալված, թելակարված եվ կնքված է կազմակերպության կնիքով:

Ուսումնասիրության պահին կազմակերպության դրամարկղում կանխիկ դրամի մնացորդ հաշվապահորեն և փաստացի չի եղել:

2011թ. հունվարից դպրոցում սովորում էր 63 աշակերտ և գործում էր 9.5 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 25 մարդ, այդ թվում 19 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 65 աշակերտ, գործում էր 10 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 25 մարդ, այդ թվում 18 մանկավարժ:

2011թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 31407.4 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 31407.4 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2011թ.՝ 105.7 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 30701.3 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2012թ. կազմել է 811.8 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 97.8 տոկասով:

Առ 01.01.2011թ. կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Դպրոցի ջեռուցումը կատարվում է վառարաններով՝ փայտով: 2011թ. ջեռուցման համար գնվել և ծախսվել է 43 խոր. մետր փայտ, ընդամենը գումարով 482.6 հազ. դրամ: Ջեռուցումը կատարվել է 10 վառարաններով, մեկ վառարանի օրական միջին ծախսը կազմել է 0.054 խոր. մետր փայտ:

2011թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 645.4 հազ. դրամ:

2011թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2011-2012 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 690 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 244.7 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2010-11 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 4 հատ իննամյա կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյանում:

2012թ. հունվարից դպրոցում սովորում էր 65 աշակերտ և գործում էր 10 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 25 մարդ, այդ թվում 18 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 62 աշակերտ, գործում էր 9.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 24 մարդ, այդ թվում 18 մանկավարժ:

2012թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 30316.8 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 29505.0 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2012թ.՝ 811.8 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 30178.4 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2013թ. կազմել է 138,4 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 99.5 տոկասով:

Առ 01.01.2013թ. կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

2012թ. ջեռուցման համար գնվել և ծախսվել է 41 խոր. մետր փայտ, ընդամենը գումարով 492.0 հազ. դրամ: Ջեռուցումը կատարվել է 10 վառարաններով, մեկ վառարանի օրական միջին ծախսը կազմել է 0.05 խոր. մետր փայտ:

2012թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 471.2 հազ. դրամ:

2012թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

2012-2013 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 619 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 212.45 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2011-12 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 6 հատ իննամյա կրթության վկայական և 11 հատ միջնակարգ կրթության վկայական, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյաններում:

2013թ. հունվարից դպրոցում սովորում էր 63 աշակերտ և գործում էր 9.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 26 մարդ, այդ թվում 19 մանկավարժ, իսկ սեպտեմբերից սովորում էր 60 աշակերտ, գործում էր 9.75 դասարան, աշխատողների թիվը կազմում էր 27 մարդ, այդ թվում 19 մանկավարժ:

2013թ. տարեկան նախահաշվով դպրոցի պահպանման համար ծախս էր նախատեսվել 31976.3 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է 31976.3 հազ. դրամ եվ հ/հ մնացորդը առ 01.01.2013թ.՝ 138.4 հազ. դրամ: Դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 31258.1 հազ. դրամ, հ/հ մնացորդը առ 01.01.2014թ. կազմել է 856.6 հազ. դրամ, կամ նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 97.8 տոկոսով:

Առ 01.01.2014թ. կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Ապրանքանյութական արժեքների ստացումը և ծախսերը կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

2013թ. դպրոցի ջեռուցման համար գնվել և ծախսվել է 40 խոր. մետր փայտ, ընդամենը գումարով 486.7 հազ. դրամ: Ջեռուցումը կատարվել է 10 վառարաններով, մեկ վառարանի օրական միջին ծախսը կազմել է 0.05 խոր. մետր փայտ:

2013թ. աշակերտների և մանկավարժների երթևեկության համար ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 525.6 հազ. դրամ:

2013թ. նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերն հիմնականում ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որը համապատասխանում է ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին, բացառությամբ գնումային գործընթացի:

2013-2014 ուս. տարվա համար վարձակալությամբ տրվել է 671 դասագիրք, որի վճարման ենթակա գումարը կազմել է 202.9 հազ. դրամ, որն ամբողջությամբ գանձվել և մուծվել է:

2012-13 ուս. տարվա համար ստացվել և տրվել է 6 հատ իննամյա կրթության վկայական և 6 հատ միջնակարգ կրթության ատեստատ, որոնք հաշվառված են համապատասխան գրանցամատյաններում:

Եզրակացություն

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվեց, որ 2011թ. նախահաշվով նախատեսված ծախսը կատարվել է 97.8 տոկոսով, 2012թ. կատարվել է 99.5 տոկոսով, 2013թ. կատարվել է 97.8 տոկոսով:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունը դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

Բանկային և դրամարկղային գործառույթները կատարվել են գործող օրենքների և իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Աշխատավարձերի հաշվարկման և վճարման գործառույթների ընտրանքային ստուգման ընթացքում սխալներ և թերություններ չի արձանագրվել:

Կազմակերպությունում առկա է գործառույթների իրականացման հետ կապված պայմանագրերը:

Հաշվետու ժամանակաշրջանում նախահաշիվներով նախատեսված և կատարված ծախսերն ունեն փաստաթղթային հիմնավորումներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25 թիվ 525 որոշման պահանջներին:

Մենք կարծում ենք, որ աուդիտի ընթացքում հավաքագրվել է բավարար և հիմնավոր տեղեկություններ մեր կարծիքը հայտնելու համար:

Մեր կարծիքով կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական հաշվետվությունները, տնտեսական և կազմակերպչական գործառույթները կազմակերպության ֆինանսական վիճակի, դրամական հոսքերի, տնտեսական և կազմակերպչական գործունեության մասին տալիս են հիմնականում ճշմարիտ և իրական պատկեր ՀՀՀՀՍ-ի, ՀՀ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի  
<<Ներքին աուդիտի բաժնի>> պետ՝

Է. Միրզոյան

Գլխավոր մասնագետ՝

Ս. Վեզիրյան

03 մարտ 2014թ.

